

նութեան՝ երբոր մէկդիէն կը ջանայ հոգեւորը մարմնաւորին տակ նուաձել, միւս դիէն ալ տեղիք կու տայ ասանկ անպատշաճ վարմունքներու, որուն արդիւնքը ուրիշ բան չէ, եթէ ոչ իսպառսպուռ ջնջումն եկեղեցւոյ իշխանութեան, որ է հիմն և հաստատութիւն կրօնի:

Առաքելական սուրբ Աթոռոյս հոգեւոր իրաւասութիւնն ալ կրած է չառ հեղ, և տակաւին կը կրէ այս կերպ յարձակումներ ու ինչուան անգամ սպառնալիքներ ըստ պահանջման ազատութեան դարիս. սակայն Աթոռս եկեղեցւոյ պատիւը պահելու և հոգեւոր իշխանութիւնը հաւատարակ մարդոց առ ոտն կոխել չտալու համար վեհանաճառքար լռելու կը պարտաւորի, և կը ներէ բոլոր անոնց որոնք խոժոռ դիմօք իրեն կը նային. թող տալով Ազգային Վարչութեան կամացը, թէ որ պատշաճ կը դատի, զանոնք յուղղութիւն և ի պարկեշտութիւն հրաւիրել, համ եւ հոտ գնել անոնց լեզուին, որ խօսին ինչ որ պատշաճ է իրենց բանականութեան, և գրեն ինչ որ օգտակար, և ոչ թէ անստուգութիւնը ստուգութեան պատրուակ ընելով՝ գայթակղեցնել զՎերմեռանդ հասարակութիւնը, որոյ համար կը յիշեցնեմք իրենց Վրիստոսի Տեառն մերոյ խօսքը. Սաբ. ԺԸ. 6:

Այս է աւասիկ Հայոց հոգեւոր իշխանութեան արդի վիճակը:



Երեսնայն և Ռիւսոս վարժապետները:

Գերապատիւ Յակոբ Արքազան Եպիսկոպոսը Եդեսիա և Վիլնա գացած ժամանակ, ինչպէս բոլոր պորտած տեղերը, նոյնպէս հոն ալ վար-

ժատունները այցելութեան երթալով, հետագայ համառօտ տեղեկութիւնը կը հաղորդէ մեզ: Յայտնի է թէ Եդեսիոյ մէջ Առսաւորչական և Ռուբինեան անուամբ ընկերութիւններ կան ժամանակէ ի վեր հաստատուած, որոց հսկողութեան տակ կը գտնուին դպրատունները. ահաւասիկ յիշեալ դպրատանց աշակերտաց թիւը եւ անոնց առած ուսմունքը, որ ոչ այնչափ գոհունակութեան եւ գովութեան՝ որչափ որ քաջալերութեան արժանի են:

Առսաւորչական ընկերութեան Ա. դպրատան ուսանողք.

Քերականութիւն սորվող . . .	22
Նոյն՝ գիշերային դասառութ . . .	11
Հասարակ ընթերցման պարապող . . .	9
Նոյն՝ գիշերային ուսանողք . . .	30
	72

Սոյն Ա. դպրատան աշակերտաց տնօրէն դասատու է Արեւեան տիրացու Յակոբ վարժապետն Ուրֆացի:

Բ. դպրատան աշակերտք նոյն ընկերութե, որոյ դասատու է Քէօսեանց տիրացու Յակոբ Ուրֆացին:

Նարեկ, զէն հոգեւոր և գործոց ուսանողք	8
Սաղմոս կարգացողք	10
Հեգերէն	14
Քերական	17
	49

Ռուբինեան ընկերութեան Ա. դպրատան ուսանողք. որոց դասատու է տիրացու Գրիգոր Սիլակոտորեան:

Նարեկ, զէն հոգեւոր և գործոց ուսանողք	17
Սաղմոս և հեգերէն	39
Քերական	27
	83

Բ. դպրատան՝ Նարեկ, գործոց, ընթերցարան եւ այլն ուսանողաց թիւն

25 հոգի, և դասատու տիրացու մահ-
տեսի Սարգիս Սաղաքեան : Չորս
դպրոցին մէջ ընդամենը ուսանողաց
թիւն է 194 հոգի :

Քիլիսու դպրատան աշակերտք .

Աւետարան կարգացողք	4
Նարեկ	7
Տաճկերէն Ատուածաշունչ	1
Թարգմանութիւն ընող	2
Կտակարան կարգացողք	5
Սամազիրք	3
Սաղմոս	11
Րնթերցարան	1
Հեգերէն	7
Քերական	28
	68

ՆՈՒՒՐԱՏՈՒՔ

Տատեան Վսեմաշուք Առաքէլ
էֆէնսին շնորհեց սուրբ Աթոռոյս
Թանգարանին ,

Սէկ կտոր քարացեալ անդիւն :

Վեց պղտիկ անդիւն պատուական
քարեր :

Սէկ դանակ սալալ ըսուած :

Տատեան Վսեմաշուք Ներսէս պէ-
կը նուիրեց սուրբ Աթոռոյս Թան-
գարանին ,

Անգղիոյ Թագաւորական պալա-
տին ամեն կողմէն առնուած տես-
քերը , զատ զատ փորագիր տպուած :

Չորս կտոր մեծագիր գրեանք զա-
նազան նկարներու :

Սէկ մանրագիտակ (microscope) հան-
դերձ իւր պարագաներովը :

Պ. Տատեան Վսեմաշուք Սիմօն
պէկը շնորհեց՝

Սէկ ելեքտրական գործիք մը մեծ ,
որոյ ապակիին տրամագիծն է 82 հար-
իւրամեդր :

Սէկ փոքր առձեռն՝ նոյն ելեք-
տրական գործիքէն :

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

(Տես թիւ 9 էրես 137) :

ԺԳ. Հարցման լոծոմբ՝ լեալ է խնդրին
320 : ԺԴ. Հարցման լոծոմբ՝ էր գինին
411 126 : ԺԵ. Հարցման լոծոմբ՝ լեալ
էր գինի 311 616 Դաւիթիւն : ԺԶ. Հարց-
ման լոծոմբ՝ հասարակաց գաղապան յա-
ւորս 70 :

Հարցումն ԺԵ.

Նաւ մի երթայր լի ցորենով , և
կէտ մի զհետ մտեալ նաւին , նա-
ւորդքն երկեան և ընկեցին նմա կեր
զհասարակ (կէս մասը) ցորենոյն , և
յերկու աւուրն ընկեցին զհինգ մասն
մնացելոյն . յերրորդումն՝ զուլթն , ի
չորրորդումն՝ զեւթն , ապա ի նաւա-
հանդիսոն հասին , և մնաց 15 (7200) :
Արդ , գիտեա թէ ամենայն քանի
լիեալ էր :

Հարցումն ԺԶ.

Ապաղարէ մի էր իմ , խանդարե-
ցի և այլ սպաս արարի , զերեք մասն
մեսուր մի արարի , և զչորրորդ մասն
այլ մեսուր արարի , և զհինգ մասն
երկու բաժակս արարի . և զվեցն՝ եր-
կու սկուտեղս արարի , և երկու հար-
իւր և տասն դրամէ սկաւառակ մի
արարի : Արդ , գիտեա թէ ընդ ա-
մենայն քանի էր լիեալ ապաղարէն :

Հարցումն ԺԸ.

Այր մի յերիս եկեղեցիս եմուտ ,
և խնդրեաց յԱտուածոյ յառաջնումն՝
եթէ տուր ինձ որչափ ունիմս , եւ
տամ քեզ քսան և հինգ դահեկան :
Նոյնպէս և յերկրորդումն ետ զքսան
և զհինգն , և յերրորդումն . և առ-
իւր ոչինչ մնաց : Արդ , գիտեա թէ
յառաջն քանի ունէր :